


ԳԵՆԵԼ Ս. ՎԱՐԴԱՊԵՏ

(Տեսուչ Անթիլիասի Կարողի-
կոսարանի տպարանին)

ԱՆՄԱՀ ՎԵՀԱՓԱՌԱԾ

 որագիր կուգա համեստ, գոյց-
ծավոր դասակարգի ներկայա-
ցուցիչն մը: Անթիլիասի հրա-
պարակի կայնած էի և կսպա-
սեի ինքնաշարժի: Սուպին շափ ծանր՝ ինա-
մենար նաև ինքնաշարժը, երբ հեզիկ քովս
մոտեցավ թումարզացի հայ երիտասարդ մը,
և երկյուղածությամբ լեցուն ձայնով մը հար-
ցուց ինծի:

— Հա՛յր սուռբ, ե՛րբ պիտի թաղվի Վե-
հափառի մարմինը:

— Կիրակի օր, Անթիլիասի մեջ:

Աչքերուն մեջ ծիածանվեցավ դառն ար-
ցունքը ու հովումին հաղթահարելով հարեց:

— Կրնա՞ք թաղել անմահը, ո՞ր ձեռքերը
պիտի իջեցնեն զայն գերեզման, կրնա՞մա-
հանալ Տեր Գարեգին Կաթողիկոս Հովսեփի-
յանց, որ պղին դարավոր ու փառավոր ար-
ժեքները կայնքի կոչեց և հայությունը ան-
մահացուց:

Զերցավ շարունակել, արցոնքը խեղդեց
ձայնը կոկորդին մեջ, փղձկեցավ ու հեռա-
ցավ կքած՝ իր սիրաը կրծող ծանր սուպին
տակ, ու զիս ձգելով շատ ավելի ծանր ու
լուր տառապանքի մը տակ, այն մտածու-
մով, որ Վեհափառ Հայրապետին թողած
պարապը կանդոհեր նաև շատերու կարգին
համեստ գործավորի մը սիրուը:

Տառապանքը կզսպանակվի ոչ այնքան
այն դժբախտ իրողութենեն, որ Գարեգին
Կաթողիկոսը ոչ ևս է, այլ առավելաբար այն
մտածումեն, որ ան կրնար ապրիլ ավելի
անդրբր ու երկար կայնք մը և ի լույս ըն-
ծայել իր բոլոր թերավարու ու անտիպ գո-
հարները, որոնց արժանիքի գնահատանիքին

1. ԳԵՆԵԼ Ս. Վարդապետի հոդվածը արտասպառ ևնք
Թեյրութիւնը Անթիլիաս օրաթերթից փոքր կրծատու-
մով: — ԽՄԲ: :

ինք հասած էր միայն՝ շատ, շա՛տ քիչերու
հետ:

Անգամ մըն ալ կիշնե սուպի և քողը Կի-
լիկիո դարավոր Աթոռին վրա ու խալարին
մեջ կյանքը կդառնա անել բավիղ մը՝ խար-
խափումով գտնելու համար ելք մը ապագա-
յի լուսաշող արշալույսին:

Գարեգին Կաթողիկոս կհանդիսանա Ա-
րարատյան դաշտի մեջ սիգապանծ բարձ-
րացող ու դեպի երկինքի ամպերը սուրա-
ցող նվիրական Արարատը: Ցավը տակավին
թարմ է և կորուսար շենք կրնար ըստ ար-
ժանվույն գնահատել, ճիշտ ինչպես լեռնե-
րու ահավիր մեծության մոտիկ շենք կրնար
կշուկ անոնց մեծությունները: Պետք է հեռ-
վեն դիտել զանոնք, որովհետև քանի՛ կհե-
ռանանք անոնցմեն, անոնք այնքան կդառ-
նան մեծ, տիրապետելու աստիճան բոլոր
անջրապետներու: Այնպես ալ հտքեն պիտի
զգանք ու սգանք մեծությունը անհետացող
ՄԵԾ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԻՆ:

Զգացուամով գրված սա տողերուն հակա-
կշիռը շկորսնցնելու համար՝ պողիկացող ու
չզսպվող ցավի ամենի ալիքներուն ընդմեշեն,
և կուզեմ անգամ մըն ալ անդրադառնալ
Տեր Գարեգին Կաթողիկոսը մեր աչքին մեծ-
ցընող ու սրբացնող ազդակներու մասին,
որոնք իրագործվեցան կարճ ժամանակամի-
ջոցի մը մեջ և Անթիլիասը դարձուցին ՄԵԾԱ-
ԿՈՒՅԹԻ ԿԵՐՄՈՒ մը:

Երանաշնորհ Հայրապետը իր առանձին ու-
շադրության առարկան դարձուց ԴՊԲՎԱՆ-
ՔԸ, որովհետև համոզված էր, որ քրավա-
կան չէ մի կերպ կառավարվելու դրաբանը
բավականական, այլ վետք է անցնել առեղ-
ծագործող կյանքի, կրոնական-կենեցական
և մշակույթի մարզերի մեջ, ինչ որ կիրա-
կանանար մեծ մասամբ Դպրեվանքով,
պատրաստելով մեկ կողմե գիտնական, քա-

րոպիշ և մշակութային գործերով զբաղող միաբաններ և մյուս կողմե ուսուցիչներ ու քահանայացուներ Կիլիկյան վիճակներու թե Սփյուռքի գաղութներու պահանջքներուն համար:

Անմիջապես Հրավիրվեցան կարող ու մասնագետ ուսուցիչներ, աշակերտության թիվը 20-ին բարձրացավ 50—60-ի, բացի ցավ ՔԱՀԱՆԱՅԻՑ ԴԱՍԱՐԱՆՆը, և Դպրութանը տվավ իր հոմաձրքը:

Երշանավարտ սաներ ձեռնադրութենե ետք ղրկվեցան Եվրոպա և Ամերիկա, կատարելագործելու համար իրենց ուսումը: Անոնցմե չորս վարդապետ, երկու քահանա և երեք աշխարհական ուսանողներ կուտնվին Ամերիկա, մեկական քահանաներ՝ Անգլիա, Ֆրանսիա, Հարեշիստան, Կիպրոս և Սյուրիա, իսկ երեք վարդապետ և երկու քահանա իրանանի մեջ: Այս տարի պիտի ձեռնադրվեին երկու վարդապետ և երկու քահանա և սարկավագներ, որոնց ձեռնադրությունը հետաձգվեցավ Վեհափառ Հայրապետի մահվան պատճառով:

Դպրեվանքին հետո ՏՊԱՐԱՆՆը դարձավ Վեհափառ Հայրապետին ուշադրության առարկան:

Տպարանը մինչեւ Վեհափառ Հայրապետի ընտրությունը կառավարվեր մի՛այն մեկ գործավորով. այժմ տպարանի մեջ կաշխատին տասնյակ մը գործավորներ: ԿԱԶՄԱ-ՍՈՒՆՆ իր օրով բացվեցավ տպարանի մեջ: Տպագրական նոր մամուկ բերվեցավ, ինչպես նաև կարող մեքենա: Հրահանդված էր զնելու արդիական նոր մեքենաներ ու տառեր, տպարանը դարձնելու համար բար ամենայնի բոլոր պահանջքները բավարարող:

Տպագրված, տպագրվող և տպագրելի գիրքերու շարքը շատ է:

Ի՞ր ջանքերով ՀԱՍԿը ծաղկեցավ, ըլլա՛ բովանդակությամբ և ըլլա՛ ծալվալով: Սկըսավ հրատարակվել ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՍԿ տպարեգիրքը, որուն Ա. և Բ. տարիները լույս տեսան արդեն, և Գ. տարին ջուտով մամուլի տակ կմտնե: Տպվեցան ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ ԶՈՒԱԳՐԱՑ Ա. հատոր, Բ.ը մամուլի տակ է և ընդամենը պիտի ըլլան չորս հաստափոր հատորներ, ամեն հատոր բաղկացած ավելի քան 1.250 էջերե. ՅՈՒՅԱԿ ԶՈՒԱԳՐԱՑ ԱՆԿՅՈՒԹԻՈ, Բարգեն Աթոռակից Կաթողիկոսի, որուն 1.000-ի ավելի էջերը տպված են և ի մոտո լույս կտեսնե. ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԶՈՐԻՑ ԱԻԵՏԱՐԱՆԶԱՅ, Ստեփանոս Սյունեցիի և մամլո տակ է նույն հեղինակի ՄԵԿՆՈՒԹԻՒՆ եջեկին էլի հատորը:

Տպագրված գիրքերու ցանկը տալ չէ մեր նպատակը, այլ այսքանով ցույց տալ թէ

տպարանը ո՞րքան ճամբա կտրած անցած է իր օրով, մինչ իրմե առաջ մի՛այն կոպագրքեր ԱՄՄԱԹԵՐԹ ՀԱՍԿը 16 երեսով, քանի մը հատուկուտոր տպագրական գործերով:

Երրորդ ուշադրության առնվելիք հաստատությունը ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆՆ էր, որուն համար հանգուցյալ Վեհափառը կըսեր. «Եա մի ծալիկ է, որ բունամ է միա՛յն նողուր կյանքով ունեցած ազգերի մեջ»: Քաղաքակիրթ ազգեր կպարծենան իրենց մատենադարաններով, որոնց համար կծախսեն բարերար անոնց մեջ պահելու համար դարձնեն իրենց եկած հասած գրական իրենց լաստակները: Մենք ևս՝ որպես քաղաքակիրթ ազգ՝ ունեցած ենք մեր Գլածորները, որոնց Մատենադարաններուն մեջ պահված են մեր միջնադարյան շրջանի անդին գոհարները:

Մատենադարանի գիրքերուն թիվը հասած է մոտավորաբես 12.000-ի, որոնց վրա տարվե-տարի կավելնան Հարյուրավորներ: Տպարանի կազմատոմը կաշխատի կազմի մատենադարանի անկազմ գրքերը, որոնք ըստ նյութի գասավորված են ու կպահվին ապակեարաններու մեջ: Վեհափառ Հայրապետը մատենադարաններու բարիքները վարդապետ անձնագործյուն մը, իր կարգին լայն բացական Կաթողիկոսարանի մատենադարանին դուները բանասերներու առջև, զորս նաև համախ պատվեց՝ իրեն սեղանակից ընկելով զանոնք:

Իր օրով տեղի ունեցան ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԱՆՆ Անթիւհասի Վեհարանին մեջ, ուր քննվեցան ու վավերացվեցան Ուսուցչական ծրագիր-կանոնադիր և Ուսումնական ծրագիր, ԿԻՐԱԿՆՈՐՅՑԱ ՎԱՐԺԱՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԱՆՆ էր, ուր մշակվեցավ ծրագիր-կանոնադիր՝ հայ մանկարտություն կրոնական դաստիարակության գործը գնելու համար ավելի ամուր հիմերու վրա:

Իր օրով հասաւալեցավ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ ԳԵՂԱՐԿԵՍԱԿԱՆ ՕՐԸ, որ հանդիս եկավ զույգ համերգներով 1946-ին և 1947-ին և ստեղծեց մեծ խանդավառություն երաժշտական ու արվեստագետ հայ թե օտար հասարակության մեջ:

Ոչ որի մտքեն պիտի ելլե ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԱՄԱԿԵՍԻ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍԸ, որ տեղի ունեցավ 1948-ին, Կաթողիկոսարանի դահլիճին մեջ, ուր ցուցադրվեցան նայ ընտիր ծեռագիրներ՝ մագաղաքի և բորի վրա, և այ անմահ ծաղկողներու մաերաներներ՝ անբառամ զույներով, մեր անհանուն հանեարեն հանդակները՝ անխոս բարի և փայտի վրա, մեր հանեահեղ վարպետներու

բարձրացնցած սրբատաշ կարողիկեները, հայ արքաներու դրամները, որոնցմով վարձատրվեցալ հայ աշխատանքը, Հակոբ Մեղապարտ տպագրիչի և Աստվածաշնչը տպագրող Ոսկան Վարդապետի և անոնց արժանավոր հաջորդներուն լրասարեր տպագրություններու գուստերերոյան, ոսկերեւ և նորահյուս ասելինազորդություններ, ազնվական գույներով հայալրոշմ զորգեր և մեր արվեստագիտներու մասը արվեստով սիրակի ստեղծագործություններն են հմտիչներ, իրեւ կորողներ հայ հանենարի ջրվեժնեն:

Նախարարներ, գեսպաններ, հյուպատոսներ, երեսփոխաններ, բանաստեղծներ, մտավորականներ, արվեստագիտներ, վաճառականներ, արհեստավորներ, բանվորներ՝ ամենազգի և մերազնյա, թվով 12.000 հաղորդվեցան հայ արվեստի խորհուրդով, նոյնքերի 28-են մինչև դեկտեմբերի 26:

Իր օրով հաստատվեցավ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԼՍԱԲԱՆը, ուր քանից դասախոսուց և զրեթե միշտ անձամբ նախադահեց անոր դասախոսություններուն ու ըրավ տակման իսուքերը այնքան զմալլելի ու համեմված գաղափարներով ու լեզվով։ Այժմ այդ դասախոսությունները տեղի կունենան Պետական Կրթական նախարարության սրահին մեջ։

Կատարեց ՍՈՒԻՆ ՄՅՈՒՌՈՒՆԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ, որուն ներկա եղան ավելի քան 25—30.000 հայ հավատացյալներ, օծեց ՀԻՆԳ ԵՓԻՍԿՈՊՈՒՍՆԵՐ, կենսագործելու համար ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՅԻՆ, կազմակերպեց ՎԱՐԴԱՆԱՆՅ ԴՅՈՒՅՑԱՆԱՄԱՐՏԻ 1500-ԱՄ-ՅԱԿԻ ԲԱՑՄԱՆ ՈՒ ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, որուն սակայն չկրցավ անձամբ ներկա լլալ, անողոք հիվանդությամբ անկողնու գամկած լլալով։

Վեհափառ Հայրապետը ՇԽՆԱՐԱՐԱԿԱՆ մարզի մեջ ևս ուներ ծրագիրներ։ Անոր փափառն էր դիմել Անթիվասի Հայոց վանքը նյութական ամուռ հիմերու վրա։ Իր միտքը հիվանդության շրջանին տևապես կտառապեր Անթիվասի ապաղայով և կըսեր. «Ի՞նչ

պիտի անենք, ի՞նչ անեմ, ի՞նչ պիտի լինի»։ Այս նպատակին համար անհիկա վանքին նվիրեց մինչև հետին սենտը իր ստացած նվիրներուն, որոնք գոյացած էին Ամերիկայի մեջ և այլուր կատարված իր հոբելյանական հանդիսություններին։ Ան հարյուր հազար դոլարներ նվիրաբերեց վանքին, որոնցմով Հինգ տարի մատակարարեց վանքին տարեկան ծախսերը և մնացած գումարով գնեց ՀՈՎՍԵՓՅԱՆ ԿԱԼՎԱՆԸ Բեյրութի Շարա Համրա պողոտալին վրա։

Իր ջանքերով սկսավ շինությունը ԴՊԲ-ՎԱՆՔԻ ՆՈՐ ՇԵՆՔԻՆ, նկատելով որ Դպրեվանքի հին շենքը անբավական էր պարփակելու աշակերտության ծավալող թիվը. Դըպրեվանքի նոր շենքը իրեն կողքին ունի մատենադարանի բաժին մը, ընդունակ սրահ. Ներով, որոնք պիտի կահավորվին ամենեն արդիական ձևով, և ուր պիտի փոխադրվին մատենադարանի 12.000 գրքերը։ Դպրեվանքի նոր շենքը ունի նաև հարակի թանգարանի բաժին մը, ուր պիտի ամփոփվեն հայկական (հատկապես Կիլիկյան) և արեւելյան հնություններ։

Շենքը պավարտած է արդեն, և ի՞նչ տիմուր զուգադիպություն. անոր հետ մեկտեղ ավարտեցավ նաև կյանքը Վեհին, որուն սիրուր կտրովիեր ի տես և ի լուր այդ շենքին քարակոփներու ամեն մեկ քուզունի հարվածներուն։

Կերազեր անոր բացումը անձամբ կատարելու, իր փափառը մնաց երազ միայն...

Իր ջանքերով Բիքֆայայի մեջ գնվեցավ 52.000 քառակուսի մետր տարածությունը ընդարձակ ու շքնազ գետին մը, ուր աշխատանքներ սկսած են արդեն, բարձրացնելու համար Կաթողիկոսարանի վաշիլու ամառանոց մը, Դպրեվանքի հարակից ընդարձակ շենքով մը և մատուռով մը։

Արանաշնորհ Հայրապետը համեստ պայմաններու մեջ ծնավ Տիրոջ պիտի, և անոր պես ապրեցավ հարուստ կյանք մը, մեզի կտակելով անմոռաց հիշատակ մը։

